«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ << Հայկական հարցը Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսներում>>

թեմայի դասավանդման արդիական մոտեցումները հանրակրթական դպրոցում

ԱՌԱՐԿԱ Պատմություն

ՀԵՂԻՆԱԿ Կարինե Ասծատրյան

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Փարաքարի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն ——————————————————————————————— 3

Գլուխ 1. <<Հայկական հարցը Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսներում>> թեմայի դասավանդման արդիական մոտեցումները հանրակրթական դպրոցում

1. 1 Հայկական հարցի քննարկումները Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսներում——— 5

1. 2. Հայկական պատվիրակությունների գործունեությունը Լոզանի կոնֆերանսում- 16

Եզրակացություն——————————————————————————— 19

Օգտագործված գրականության ցանկ——————————————————21

Ներածություն

Հետազոտության արդիականությունը Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական իրավիճակից, հարևանների հետ ունեցած հարաբերություններից, այսօր առկա պատերազմական իրողությունից ելնելով հանրակրթական դպրոցում Հայկական հարցի և նրա հետ կապված բոլոր փաստաթղթերի իմացությունը, վերլուծությունը, մեր կողմից թույլ տված սխալներից դասեր քաղելը պետք է դիտարկել որպես անհրաժեշտություն:

Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսները դարձան այն շարունակությունը, որը սկսվել էր դեռևս Հայկական հարցի միջազգայնացումից, երբ Բեռլինի վեհաժողովում միջազգային հակամարտությունների ոլորտ մտցվեց Հայկական հարցը: Այս կոնֆերանսների ժամանակ հերթական անգամ մեծ տերությունները կեղծ խոստումներ տվեցին Հայաստանին Հայկական հարցը լուծելու համար: Հայկական պատվիրակությունները հավատացին եվրոպական խոստումներին, չպատկերացնելով, որ նրանցից յուրաքանչյուրը առաջնորդվում է իր սեփական շահերով:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը կանգնած է բախտորոշ ճամփաբաժանի առաջ: Մեր հետագա քայլերից է կախված, թե մեզ համար ինչպիսին կլինեն առաջիկա տարիները՝ կորուստների, թ՞ե ձեռքբերումների: Մեր առջև ծառացել է առկա մարտահրավերները չեզոքացնելու և դրանք դրականորեն հեղաշրջելու հրամայականը:

Հետազոտության նպատակը Հայկական հարցի և նրա հետ կապված բոլոր փաստաթղթերի իմացության շնորհիվ հայ դպրոցականների՝ հետագա սխալներից խուսափելու և կանխարգելու գործընթացն է:

Հետազոտության խնդիրներն են՝

1. վերլուծել Լոնդոնի և Լոզանի պայմանագրերը միջազգային իրավունքի տեսանկյունից,
2. վերհանել Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսների ժամանակ հայկական պատվիրակությունների կողմից թույլ տրված սխալները, մեծ տերությունների, Թուրքիայի քաղաքական տեսակետներն ու նրանց դիրքորոշումը Հայկական հարցի վերաբերյալ,

3. հաշվի առնել անցյալի սխալները և հայ-թուրքական հարաբերություններում առկա խնդիրներին լուծումներ տալուց ի նկատի ունենալ այն:

Հետազոտության մեթոդներ

- զրույց
- քննարկում

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը

Հետազոտությունը տեսական նշանակություն ունի թեմայի շուրջ ուսումնասիրություններ կատարողների համար և գործնական նշանակություն հանրակրթական դպրոցներում աշխատող պատմության ուսուցիչների համար:

Հետազոտության կառուցվածքն ու ծավալը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը՝ 21 համակարգչային էջ:

ԳԼՈՒԽ 1

<< ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՆԴՈՆԻ և ԼՈԶՈՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐՈՒՄ>>

ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

1. 1 Հայկական հարցի քննարկումները Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսներում

Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց Անտանտի հաղթանակով: Գերմանիան իր դաշնակիցներով, այդ թվում Թուրքիան պարտություն կրեցին: Անտանտի տերությունները, որոնց զինված ուժերի շարքում պատերազմի տարիներին մարտնչում էին շուրջ 200 հազար հայ մարտիկներ, այլևս կաշկանդված չէին պատերազմի ծանր հոգսերով ու հարուցած խորընդոտներով: Պատերազմի հաղթական ավարտից հետո հայերով ու Հայաստանով՝ հոգուտ հայ ժողովրդի, զբաղվելու և հարցերը արդարացիորեն լուծելու համար խանգարիչ օբյեկտիվ գործոններ չկային:

Հայերի ու ապագա Հայաստանի ճակատագրին վերաբերող հարցերը Անտանտի դիվանագիտության պլաններում կապված էին Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի խնդրի հետ:

1920 թվականի փետրվարին դաշնակից պետությունների դեսպանների կոնֆերանսը Լոնդոնում մշակեց Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նաձագիծը: 1920 թվականի ապրիլին Սան-Ռեմոյի կոնֆերանսում Անգլիան ու Ֆրանսիան վերջնականապես կարգավորեցին այդ պայմանագրի հետ կապված իրենց փոխադարձ հաշիվները և վերջապես Թուրքիայի հետ հաշտության պայմանագիրը կնքվեց 1920 թվականի օգոստոսի 10-ին, Սևրում, որը պատմության մեջ մտավ << Սևրի դաշնագիր>> անվան տակ: [1]

[1] Եսայան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 94:

Սևրի պայմանագրով դաշնակից տերությունները ճանաչեցին Հայկական Հանրապետության անկախությունը: Թուրքիան իր հերթին այդ պայմանագրով պարտավորվում էր ճանաչել հայկական պետության անկախությունը: Հայ-թուրքական պետական սահմանի վերջնական լուծումը Ազգերի լիգայի որոշման համաձայն Սևրի պայմանագրով դրվեց ԱՄՆ-ի նախագահի՝ Վուդրո Վիլսոնի վրա՝ որպես միջազգային իրավարարի:[2]

Հայ-թուրքական սահմանը նախագահ Վիլսոնը որոշեց 1920 թվականի նոյեմբերի 22-ին: Այս սահմանները պարտադիր էին ինչպես Հայաստանի և Թուրքիայի, այնպես էլ գլխավոր դաշնակից պետությունների ու Սևրի դաշնագիրը ստորագրած մյուս պետությունների համար: Սակայն պատմական խրթին իրադարձության պայմաններում Սևրի դաշնագրին բախտ չէր վիճակված ուժի մեջ մտնելու: Հաղթող տերությունների ներքին հակասությունները, ազգային շարժումները Թուրքիայում և թուրքական ազգային շարժման համար ստեղծված նպաստավոր պայմանները հանգեցրին այն բանին, որ Սևրի դաշնագիրը չվավերացվեց տերությունների կողմից, մնաց որպես օդում կախված պատմական դիվանագիտական հուշարձան:

Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքներն ու միջազգային հետևանքները Թուրքիայի հետ վերջնականապես հանրագումարի բերվեցին Լոզանի կոնֆերանսում ուժերի հարաբերակցության նոր պայմաններում Թուրքիայի համար միանգամայն նպաստավոր միջազգային-քաղաքական մթնոլորտում: Սևրի դաշնագիրը կնքվել էր Կոստանդնուպոլսի սուլթանական կառավարության հետ, իսկ Լոզանի կոնֆերանսում Թուրքիային արդեն ներկայացնում էր Քեմալական կառավարությունը:

Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցավ այնպիսի պայմաններում, երբ նորաստեղծ Ազգերի լիգայի բարձրագույն մարմնի ընդհանուր ժողովը քննարկում էր համապատասխան կոմիտեի զեկուցումը Թուրքիայի ռազմական ներխուժման հետևանքով ՀՀ-ի համար ստեղծված ծանր դրության և նրան օգնություն ցույց տալու, ապա նաև Հայաստանը Ազգերի լիգայի անդամ ընդունելու հարցերը: Լիգային անդամակցելը կնշանակեր պարտադիր օգնություն կազմակերպել իր անդամին ըստ անհրաժեշտության:

[2] Եսայան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 95:

Թուրք – բոլշևիկյան ագրեսիայի հետևանքով ստեղծված իրադրության կապակցությամբ Ազգերի լիգայի՝ Հայաստանի մասին ընդունած որոշումները քննարկվեցին դաշնակից տերությունների Լոնդոնի 2-րդ կոնֆերանսում (1920թ. նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 4-ը), երբ տեղի էր ունենում Հայաստանի խորհրդայնացումը:

Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան դեմ արտահայտվեցին Հայաստանի ընդունմանը Ազգերի լիգա, խիստ ձևական պատճառաբանությամբ, թե անհրաժեշտ է ունենալ բավարար տվյալներ հայկական պետության մասին:

Լոնդոնի 3-րդ կոնֆերանսը (1921թ. փետրվարի 26- մարտի 12), որին մասնակցում էին Առաջին աշխարհամարտում հաղթանակած և պարտված երկրները, Ֆրանսիայի և Իտալիայի առաջարկությամբ քննարկվեց նաև Սևրի պայմանագրի հայկական հոդվածների վերանայման հարցը: Կոնֆերանսում հանդես եկան Պողոս Նուբար փաշան և Ավետիս Ահարոնյանը: Պողոս Նուբարը պաշտպանում էր Սևրի պայմանագիրը, որը նախատեսել էր ստեղծել միացյալ և անկախ Հայաստան: Ա. Ահարոնյանը հանդես էր գալիս Սևրի պայմանագրով ճանաչված հայկական պետության անունից:

1922 թվականի հոկտեմբերի 11-ին Մարմարա ծովի նավահանգիստ Մուդանում ստորագրվեց հաշտության ակտ Թուրքիայի և Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի միջև: Մուդանի հաշտությունը սակայն միայն փաստեց պատերազմական գործողությունների դադարեցման մասին: Մնացած բոլոր միջազգային հարցերի լուծումը կապված Թուրքիայի հետ պետք է տեղի ունենային ապագայում և այդ <<ապագան>> շուտով իրեն զգացնել տվեց:[3]

Արդեն 1922 թվականի սեպտեմբերի 20-24-ը Փարիզում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Ֆրանսիայի վարչապետ և արտաքին գործերի նախարար Պուանկարեն, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Քերզոնը և Ֆրանսիայում Իտալիայի դեսպան Սֆորցան որոշեցին գումարել միջազգային կոնֆերանս, որը նպատակ պետք է ունենար կարգավորել հարաբերությունները Թուրքիայի հետ և լուծել միջազգային բազմաթիվ խնդիրներ: Պատշաճ

[3] Нежинский Л. Н., Игнатьев А. В., նշվ. աշխ., էջ 362:

նախապատրաստությունից հետո 1922 թվականի նոյեմբերի 20-ին Լոզանում իր աշխատանքները սկսեց հրավիրված միջազգային կոնֆերանսը:[4]

Կոնֆերանսի բացմանը զուգահեռ ծավալվեց բավականին համառ պայքար << հրավիրվող>> երկրների (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, որոնցից առաջինի դերը պատկանում էր Անգլիային, ում պատկանում էր կոնֆերանսի գլխավոր կազմակերպչի ու հրավիրողի դերը) մի կողմից և մյուս կողմից Խորհրդային Միության, որտեղ գլխավոր հարցը նրա մասնակցության կամ չմասնակցելու խնդիրն էր կամ եթե մասնակցեր ինչ կարգավիճակով էր մասնակցելու և ինչ պայմաններով ու իրավունքներով:

Միջազգային մամուլից տեղեկանալով արևմտյան տերությունների նպատակները կոնֆերանս հրավիրելու մասին Մերձավոր Արևելքի համար՝ Խորհրդային Ռուսաստանը 1922 թվականի սեպտեմբերի 24-ին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Հարավսլավիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Հունաստանի և Եգիպտոսի կառավարություններին նոտա հղեց, որտեղ հայտնեց Մոսկվայի անհանգստությունը Մերձավոր Արևելքի իրադարձությունների հետ կապված և հայտարարեց, որ խորհրդային կողմի կարծիքով, այդ գործողությունների հիմքում << ընկած է միայն մեկ հարց ճանաչել թուրքական ժողովրդի իրավունքը փաստացի վերականգնմանը նրա լրիվ ինքնիշխանության թուրքական հողերի վրա>>:[5]

1922 թվականի հոկտեմբերի 27-ին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի կառավարությունները Խորհրդային Ռուսաստանին ներկայացրեցին նոտա, որում Խորհրդային կառավարությանը տրվեց պաշտոնական հրավեր Լոզանի կոնֆերանսին մասնակցելու համար:[6]

1922 թվականի նոյեմբերի 2-ին Գ. Չիչերինը Խորհրդային միության անունից Անգլիային, Ֆրանսիային, Իտալիային ուղարկեց նոտա, որտեղ պահանջեց լրիվ իրավասություններով մասնակցել Լոզանի կոնֆերանսին, այլ ոչ միայն նեղուցների հարցում: Բացի այդ պահանջվում էր նաև Ուկրանիայի և Վրաստանի լիիրավ

[4] Նույն տեղում, էջ 362:
[5] Нежинский Л. Н., Игнатьев А. В., նշվ. աշխ., էջ 363:
[6] Նույն տեղում, էջ 366:

մասնակցությունը <<առանց որևէ սահմանափակումների, հավասար իրավունքներով մյուս մասնակիցների հետ>>:[7]

1922 թվականի նոյեմբերի 14-ին ուղղվեց նոտա Խորհրդային միությանը նոյեմբերի 2-ի նոտային ի պատասխան: Նոտայի հեղինակն էր Պուանկարեն: Այս նոտան շատ քիչ էր տարբերվում նախորդից, քանի որ միայն իրավունք էր տրվում մասնակցել նաև Նեղուցների համար ընդունված որոշումներին:

Նոյեմբերի 20-ին Լոզանում բացվեցին կոնֆերանսի աշխատանքները: Կոնֆերանսի աշխատանքներին Անգլիան ներկայացված էր լորդ Քերզոնի կողմից, Ֆրանսիայի ներկայացուցիչն էր Պուանկարեն, Իտալիայինը Մուսոլինին:[8] Նրանում մասնակցում էին նաև պատվիրակություններ Ճապոնիայից, Թուրքիայից, Հունաստանից, Հարավսլավիայից, Բուլղարիայից և Ռումինիայից: Ամերիկայի Միացյալ Նահանգները չմասնակցեցին կոնֆերանսի աշխատանքներին: Նրանք միայն ուղարկեցին իրենց ներկայացուցիչներին << դիտորդի>> կարգավիճակով:[9]

Լոզանի կոնֆերանսում ներկայացված պետություններն ու Թուրքիան այսպես թե այնպես լուծեցին քննության դրված բոլոր հարցերը և հերթը հասավ ազգային փոքրամասնությունների ճակատագրին վերաբերող հարցերին: Սակայն ազգային փոքրամասնությունների հարցը Լոզանի կոնֆերանսում ևս խաղաց մանրադրամի դեր դաշնակից տերությունների ու Թուրքիայի փոխհարաբերությունները կարգավորելիս: Քայլ առ քայլ լուծելով իրենց հետաքրքրող խնդիրները տերությունները միաժամանակ << լուծում>> էին թուրքական պետականության սահմաններում ապրած փոքր ազգերի և ազգությունների հարցերը յուրովի:[10] Անգլիան և մյուսները ազգային հարցը դարձրել էին խրտվիլակ՝ թուրքական պատվիրակության վրա ներգործելու համար:

Ազգային փոքրամասնությունների խնդրում կենտրոնական դեր ուներ նաև հայկական հարցը՝ Արևմտյան Հայաստանի և հայ ժողովրդի ճակատագիրը: Բացարձակ շահագրգռված չլինելով հայկական հարցը կարգավորելու հօգուտ հայ ժողովրդի Անտանտի տերությունները, արտաքին տեսքը պահելու և

[7] Նույն տեղում, էջ 369:

[8] Исврия дипломатии, նշվ. աշխ., էջ 214:
[9] Նույն տեղում:
[10] Եսայան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 97:

համաշխարհային հասարակական կարծիքին գոհացնելու համար մի քանի կիսամեռ փորձեր կատարեցին՝ Թուրքիայի վրա ներգործելու, նրա ներկայացուցիչների գութը շարժելու, որոշ զիջումների հասնելու անհուսալի հեռանկարներով: Հանդես գալով Լոզանի կոնֆերանսի նիստերից մեկում, Անգլիայի արտաքին գործերի մինիստր Լորդ Քերզոնը դիմելով ներկաներին հանդիսավոր հայտարարեց, որ << հայերը արժանի են հատուկ ուշադրության ոչ միայն դաժան տառապանքների համար, որ կրել են նրանք սերնդեսերունդ, և որը առաջ է բերել քաղակակիրթ աշխարհի համակրանքն ու սարսափը, այլև այն հատուկ հավաստիացումների համար, որոնք տրվել են նրանց իրենց ապագայի վերաբերյալ:[11]

Թերզոնը հուսադրում էր կոնֆերանսի մասնակիցներին համաշխարհային հասարակական կարծիքին հայերին ասելով, թե Լոզան ժամանելու պահին իմացել է, որ Անգորայի կառավարությունը << համոզված այն բանում, որ այդ ընդունակ և խելացի ռասսայի լիակատար կորուստը Թուրքիային վնաս կհարուցեր բարյացակամ է տրամադրված հայերի վերադարձին Անատոլիա և որ նման դիրքը մեծագույն օգուտ կբերի Թուրքիային>>:[12]

Այդպես << արմատորեն լուծելով>> Հայկական հարցը Քերզոնը ավելացրեց << հանգամանքները հնարավոր է այդ հույսերը ավելի դժվարին են դարձրել, քան կարող էր լինել առաջ, բայց մենք երջանիկ կլինեինք լսելով թուրքական պատվիրակության տեսակետը այդ հարցի կապակցությամբ:[13]

Պաշտպանելով Քերզոնի առաջ քաշած << սկզբունքները>> ազգային փոքրամասնությունների հարցի վերաբերյալ ֆրանսիական պատվիրակության ղեկավար Բարրերը ընդգծեց, որ ինքը սկզբունքորեն գտնում է, որ բոլոր փոքրամասնությունները հավասարապես արժանի են պաշտպանության տերությունների կողմից, բայց այդ սկզբունքը չէր խախտվի, եթե նշվեր, որ Օսմանյան հայերը, որոնք պատերազմի ժամանակ այդքան մեծ կորուստ են կրել և ենթարկվել այդքան ծանր տառապանքների զգալի տեղ գրավեին մեր

[11] Армянский вопрос на Лозанской конференции, Тифлис, 1926, с. 3.
[12] Նույն տեղում:
[13] Նույն տեղում, էջ 6:

հոգատարության մեջ. Արդարացի վերաբերմունք անխտիր բոլոր փոքրամասնություններին>>:[14]

Ազգային փոքրամասնությունների հանձնաժողովի նիստում Մոնտանյան հայտարարեց << պետք է թուրքական պատվիրակության հատուկ ուշադրությունը բևեռել այն փաստի վրա, որ հասարակական կարծիքը բլոր երկրների Լոզանի կոնֆերանսի որոշմանն է սպասում, որը վերջնականապես կապահովի հայ ժողովրդին Թուրքիայում խաղաղ գոյատևում>> Հայկական ազգային օջախ ստեղծելու ճանապարհով:[15] << Օջախի>> կառավարման ու կազմման գործերը կարող է անել Ազգերի լիգան և թուրքական կառավարությունը:[16] Դրան թուրքական կառավարությունը պատասխանեց վճռական և վերջնական հրաժարականով:

Ազգային փոքրամասնությունների մասին բարյացկամ ելույթ ունեցավ նաև իտալական պատվիրակության նախագահ Գարրոնին:

Լոզանի կոնֆերանսը հայկական հարցը և իր հայրենիքից հրով ու սրով դուրս քշված կոտորածը վերապրած հայության ճակատագիրը միջազգային իրավունքի ու արդարության ոգով կարգավորելու փոխարեն վերածվեց Թուրքիային սիրաշահելու ծիսակատարության, որը ծաղր ու ծանակ էր ուղղված մարդկային խղճի մարդկայնության ու արդարության դեմ: Այդուհանդերձ պատվիրակություններից յուրաքանչյուրը իր պարտքն էր համարում օրենքի ու արդարության անունից խոսել և բարեմաղթություններ շռայլել հայ ժողովրդի հասցեին:

Անգլիայի արտաքին գործերի մինիստր լորդ Քերզոնը Լոգանի կոնֆերանսի տերիտորիալ-ռազմական հանձնաժողովի նիստերից մեկում դաշնակիցների անունից փորձեց նոր առաջարկություն անել՝ նշելով, որ թուրքական պատվիրակությունը պետք է բարյացկամ վերաբերվի ազգային օջախ ստեղծելու հարցին, որպեսզի հայ ժողովրդի ցիրուցան եղած տարրերը կարողանան խմբվել մի տեղ և որպեսզի այդ օջախը նրանց հարազատ երկրում լինի:[17]

---

[14] Նույն տեղում, էջ 7:
[15] Борьян Б.А., նշվ. աշխ., էջ 233:
[16] Նույն տեղում:
[17] Борьян Б.А., նշվ. աշխ., էջ 104:

Թուրքական պատվիրակությունը այդ առաջարկությունը անվանեց ոչ ավել ոչ պակաս, քան Թուրքիան բռնությամբ մասնատելու փորձ ավելացնելով, որ Թուրքիան այդ նպատակի համար չի կարող << զոհաբերել>> ոչ մի պատառ հող:[18]

Թուրքական պատվիրակությունը << չթույլատրեց>> Անգլիային, Ֆրանսիային ու Լոզանի կոնֆերանսին մասնակցող պետություններին հայերի հարցը << ուշադրությամբ քննարկելու>> ենթահանձնաժողովում:[19]

Կոնֆերանսի տարածքային- ռազմական հանձնաժողովի 1923 թվականի հունվարի 9-ի նիստում դաշնակիցները նոր << ճիգեր>> են գործադրում հայկական հարցը կարգավորելու ուղղությամբ՝ հավանություն տալով ներկայացված զեկուցագրին, որի համաձայն Թուրքիային առաջարկում էր << իր>> տարածքում թուրքական կառավարության ընտրության և Ազգերի լիգայի համաձայնությամբ մի շրջան առանձնացնել, ուր հայերը կարողանան հավաքվել:[20] Ենթադրվում էր, որ այդպիսի շրջան կառանձնացվի հարավում Սիրիական սահմանին մոտ կամ մեկ ուրիշ տեղ:

Փոքրամասնության կարգավիճակ Լոզանի կոնֆերանսում փաստացի տրվեց միայն հույներին դրանով այդ հարցում ստացան առավելություն տերությունների նկատմամբ:[21]

Պուանկարեն հայտարարեց, որ ֆրանսիական հասարակական կարծիքը դեմ է հույների հատուկ իրավասություններին և նշեց. << ինչու նրանց համար պետք է սահմանված լինի հատուկ կարգ, այլ ոչ թե քրդերի, հայերի և այլոց համար>>:[22]

Կոնֆերանսում քննարկվող հարցերից ոչ մեկում թերևս Թուրքիան այնպիսի համառություն չցուցաբերեց, ինչպիսին հայերի օրինական պահանջների հարցում:

Թուրքական պատվիրակության համար Անտանտի տերությունների հետ բանակցելը մանավանդ հայկական հարցի շուրջ հեշտանում էր նրանով, որ կլոր սեղանի շուրջը նստած էին բարոյական գրեթե նույն մակարդակի մեծություններ՝ հին ու նոր, բարբարոս ու << քաղաքակիրթ>> կեղեքիչներ ու ստրկացնողներ:

[18] Նույն տեղում:
[19] Եսայան Ա. Ա., նշվ., աշխ., էջ 105:
[20] Նույն տեղում:
[21] Лазарев М.С., Империализм и курдский вопрос (1917-1923), Москва, 1989, с. 264.
[22] Տե՛ս նույն տեղում, էջ 254:

Ներքնաշխարհի ընդհանրություն գոյություն ուներ Թուրքիայի ու Անտանտի տերությունների միջև: Կարծես թե Թուրքիայի խիղճը հանգիստ էր Անգլիայի ու Ֆրանսիայի առաջ: Վերջին հաշվով ինչու անգլիական ու ֆրանսիական իմպերալիստները իրավունք ունեին հրով ու սրով կանգ չառնելով բռնության ոչ մի տեսակի ու ձևի առաջ, նվաճել ու գաղութացնել ուրիշ ժողովուրդների, իսկ կեղեքիչի փորձ ու դահիճի համբավ վաստակած Թուրքիան այդ նույնը անել չէր կարող: Ձավթիչների այդ ընդհանուր լեզուն էր Թուրքիայի ու Անտանտի տերությունների պատվիրակությունների մտքերի փոխանակման միջոցը << հայկական հարցի >> շուրջը: Այդ լեզվով էին թուրքերը դաշնակիցներին հասկացնում, որ եթե << Ձեզ հալալ է Հնդկաստանը, ամբողջ Աֆրիկան, արևելքում և այլուր նվաճված ու ստրկվացված շատ երկրներ ու ժողովուրդներ, ապա Թուրքիային էլ թույլ տվեք, որ իր քաղցկեղով հիվանդ ստամոքսով մարսի ամայացված Հայաստանը, թեկուզև առանց հայերի, որոնց հաշիվն էլ մաքրված է թուրքական եղանակով:[23]

Դաշնակից պետությունների միաբերան նույն գործելակերպը որդեգրելը ուներ հետևյալ պատճառները:

Իտալիան զորավիգ եղավ Քեմալական Թուրքիային, որովհետև Բրիտանիան Հունաստանին էր պաշտպանում, և նաև այն պատճառով, որ հուսախաբ էր եղել Փարիզի ժողովներում իրեն կարծեցյալ իրավունքը չտալու համար և այդ պատճառով նա հավանական զիջումներ էր փնտրում Անատոլիայի մեջ:[24]

Ֆրանսիան ևս զորավիգ եղավ Քեմալական Թուրքիային ընդդեմ Բրիտանիայի, որովհետև զգում էր, որ նա իրեն լքել է Հռենոսի առնչությամբ: բացի այդ Ֆրանսիան մտահոգ էր իր կապիտալի կորստով Թուրքիայի մեջ: Դա էր պատճառը, որ Թուրքիայի քաղաքագետները ի սկզբանե զիջողական դիրք գրավեցին Թուրքիայի հանդեպ՝ իրենց երկրի << նյութական և բարոյական>> շահերը պաշտպանելու համար:[25]

---

[23] Եսայան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 107:
[24] Նասիպեան Ա., Բրիտանիա և Հայկական հարցը 1915- 1923, Պէյրութ, 1994, էջ 245:
[25] Նույն տեղում:

Անտանտի տերությունները, այսպիսով դրժեցին իրենց միջազգային պարտավորությունները, որ ստանձնել էին պատերազմի տարիներին հայ ժողովրդի առաջ, որին ի լուր աշխարհի հայտարարել էին որպես դաշնակից:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովուրդը շատ ավելի զոհեր տվեց, քան Անգլիան, Ֆրանսիան ու Իտալիան միասին վերցրած: Նա իր իրավական դրությամբ գտնվում էր հաղթողների շարքում, սակայն կատարվեց միջազգային հարաբերությունների ամբողջ պատմության մեջ չտեսնված ու չլսված տարօրինակ՝ հաղթողը զրկվեց իր սեփական տնից ու տեղից ու հայրենիքից: Այսպես վարձահատույց եղավ եվրոպական ու ամերիկյան դիվանագիտությունը հայ ժողովրդին նրա՝ Անտանտի հաղթանակի համարկրած անթիվ ու անհամար զրկանքների ու զոհերի համար:

Բնականաբար այսպիսի համառ պայքարի միջազգային դիվանագիտությունն ուներ իր պատճառները և այս ամենը բխում էին յուրաքանչյուր երկրի շահերից:

Լոզանի կոնֆերանսի ժամանակ դիվանագետների ելույթները հայկական հարցի վերաբերյալ ունեին երկակի նշանակություն և բնույթ:

1. Այդ ելույթների փաստացի նշանակությունն ու բնույթը հետևյալում էր, որ միջազգային իրավունքի, արդարության և հումանիտար սկզբունքների հիման վրա հիմնավորել Թուրքիայի դեմ տերությունների վարած զավթողական քաղաքականությունը որպեսզի ապացուցեին եվրոպական հասարակությանը իրենց դիվանագիտության արդարացիության վրա, որ նրանք հանդիսացել են ազատարար:
2. Անտանտի երկրների նպատակը Հայկական հարցում և նրանց ճնշումը պատվիրակությանը Հայկական ազգային օջախ ստեղծելու համար կայանում էր նրանում, որ փակեին իրական նպատակը Անտանտի նվաճողական պահանջների ընդդեմ թուրքական պատվիրակության: Հայկական հարցի իրավական բնույթը միջազգային դիվանագիտության համար բարձրացվում է դեռևս 1878 թվականից Բեռլինի տրակտատով: Այդ արվում էր, որպեսզի պաշտպանվեին կապիտալիստական երկրների իրավունքները Արևելքում և ստիպեին Թուրքիային զիջել մի շարք կարևորագույն հարցերում: Դիվանագետները, որոնք համարվում էին Եվրոպայի հասարակության դեմքը և

<< պատվի>>, << արժանապատվության>>, << արդարացիության>>, խորհրդանիշերը պահանջում էին ստեղծել ազգային օջախ Թուրքիայի փոքրասիական տիրույթներում: Ինչպես միշտ ոչ թե հայերի շահերը, այլ կապիտալիստական տերությունների շահերն էին հանդիսանում քաղաքականության ուղղորդող նպատակները: Եվ երբ թուրքերը հասկացան, որ դիվանագետները առևտուր են անում սկզբունքների վրա և չեն կատարում հայերի ծրագրերը, նրանք գնացին համաձայնության, որ ստեղծեն ազգային օջախ, որպես եվրոպական հասարակական խղճի և նպատակների իրականացում և ետին պլան մղեցին Հայկական հարցը:

Հասարակական կարծիքը այդ ժամանակ անգործության էր մատնվել, իսկ սոցիալիստական Եվրոպան լռել էր: Չէ որ սոցիալիստներն էին կանգնած ճնշված ժողովուրդների պաշտպանության դիրքերում: Սակայն այդ բոլորը գաղափարախոսություն էր: Նրանց ամբողջ քաղաքականությունը ուղված էր դիվանագիտորեն ամրապնդել Արևմուտքի գաղութային քաղաքականությունը Արևելքում:

Եթե Հայկական հարցը նախկինում հանդիսանում էր առևտրի առարկա, ապա ապա այդ ժամանակ այն դարձավ քաղաքական հարց , որպես զենք Անտանտի ձեռքում ընդդեմ ԽՍՀՄ-ի: Լոզանի կոնֆերանսը չլուծեց Հայկական հարցը, այլ ընդհատեց փախստականների հարցի լուծումը՝ դիտելով այն որպես նոր զենք ընդդեմ խորհրդային իշխանության և հնարավորության դեպքում թուրքերին վախեցնելու նոր միջոց:

Ահա այդպիսին էր հայոց կոտորածների կապակցությամբ միջազգային դիվանագիտության գրաված դիրքը, որը վերջնականապես համոզեց հայ ժողովրդին, որ իզուր են նրա ակնկալությունները դաշնակից պետությունների կառավարություններից:

Ամբողջ անցքերը ցույց տվեցին, որ հայերի ու Հայաստանի հարցը երբեք էլ ինքնուրույն հարց չի եղել միջազգային դիվանագիտության համար, այլև միշտ եղել է տերությունների նվաճողական ծրագրերի իրականացման մի օժանդակ միջոց:

1. 2. Հայկական պատվիրակությունների

գործունեությունը Լոզանի կոնֆերանսում

Լոզանի կոնֆերանսից առաջ և դրա ժամանակ հայկական պատվիրակությունները ակտիվ գործունեություն ծավալեցին, որը կնպաստեր Հայաստանին վերաբերող հարցերի բարենպաստ լուծման և վերջնական հանգուցալուծման համար:

Հայկական կողմը Լոզանի կոնֆերանսում ներկայացված էր երկու պատվիրակություններով: Պատվիրակություններից մեկը գլխավորում էր Ավետիս Ահարոնյանը, մյուսը՝ Նորատունկյանը: Առաջինը ներկայացնում էր Հայաստանի Հանրապետությունը, երկրորդը՝ Ազգային պատվիրակությունը:Այս երկու պատվիրակությունները հանդես եկան Լոզանում փոխհամաձայնեցված՝ հաշվի առնելով անցյալում դրա ունեցած բացասական դերը:

Մինչև Լոզանի կոնֆերանսի հրավիրումը հայկական պատվիրակությունները հանդիպումներ ունեցան տարբեր պետությունների դեսպանների, ղեկավարության հետ, ինչպես նաև հարցազրույց տվեցին տարբեր թերթերի ու ամսագրերի, որտեղ լուսաբանում էին Հայկական հարցի բովանդակությունը, իրենց արդար պահանջներն ու ցանկությունները:

1922 թվականի հունվարի 21-ին Ավետիս Ահարոնյանը տեսակցություն ունեցավ ֆրանսիական մինիստր Պերետտի դը-լա Ռոկկայի հետ: Նրա հետ զրույցում Պերետտին զրույցի ընթացքում ասաց, որ նրա հանդիպման ժամանակ Թուրքիայի պատվիրակների հետ տպավորություն է ստեղծվել , որ թուրքերը բավականին անզիջում են: Ահարոնյանի այն հարցին, թե կարող ենք հուսալ Ֆրանսիայի աջակցության վրա Պերետտին

պատասխանեց. << Վստահեցնում եմ Ձեզ, որ մեր քաղաքականությունը Հայաստանի հարցում փոխված չէ>>:[26] Պերետտին նույն զրույցի ընթացքում արեց նաև հետևյալ հայտարարությունը. << Հայկական Դատը ֆրանսիական Դատ է>>:[27] Պերետտին վստահեցրեց նաև Ահարոնյանին, որ իրենք հավատարիմ բարեկամներ են:

1922 թվականի հունվարի 12-ին Ավետիս Ահարոնյանը հանդիպեց Իտալիայի արտաքին գործերի մինիստր Մարքիզ Տեռլա- Տորրիտայի հետ: Տորրիտան Ահարոնյանին խոստացավ ամեն ինչ անել հօգուտ Հայաստանի և նշեց, որ նրա համակրանքը մեծ է հայերի հանդեպ: Տորրիտոն Ահարոնյանին լսելուց հետո ցանկացավ նաև հուշագրի տեսքով ստանալ Ահարոնյանի ծրագրերը:[28]

1922 թվականի փետրվարի 5-ին Ավետիս Ահարոնյանն ուՆորատունկյանը հանդիպեցին Ֆրանսիայի վարչապետ Պուանկարեի հետ: Նորատունկյանը սկսելով այդ զրույցը նշեց, որԿովկասում հայ բնակչության պակաս չկա և որ այստեղ կա 500 հազար փախստական և կարող են այդտեղից զորք տալ դաշնակիցներին տեղի կարգ ու կանոնը ապահովելու համար, իսկ ամերիկահայության անունից տեղեկացրեց, որ նրանք պատրաստ են 25 միլիոն դոլար տրամադրել, եթե <<հոգատար մի պետություն հանձն առներ Հայաստանը իր խնամքի տակ առնել ու կարգավորել>>:[29]

Պուանկարեն ելույթի ընթացքում ամեն կերպ տալիս էր խուսափողական պատասխան ու նշում, որ եթե Թուրքիան առաջարկված փոփոխություններին չպատասխանի դրականորեն, ապա նրանք ոչինչ չեն կարող անել:

1922 թվականի մայիսի 15-ին հանդիպում տեղի ունեցավ Չիչերինի և Ահարոնյանի միջև, որին մասնակցում էին նաև Վարանդյանը և Գյուլխանդանյանը: Երբ խոսակցության ժամանակ հարց առաջացավ Կարսի մասին Չիչերինը ասաց. << մեղքը մերը չէ, մեղքը ձերն է>>:[30] Դա պատճառաբանվում էր նրանով, որ մինչև ռուսների զիջելը հայերը արդեն Կարսը զիջել էին թուրքերին: Այս հանդիպման ժամանակ Չիչերինը ևս խոստացավ օգնել հայերին՝ բարեխոսելով նրանց համար թուրքերի մոտ:

---

[26] Ավետիս Ահարոնյան, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Երևան, 2001, էջ 216:
[27] Նույն տեղում:
[28] Ավետիս Ահարոնյան, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Երևան, 2001, էջ 215:
[29] Նույն տեղում, էջ 219:
[30] Նույն տեղում, էջ 223:

Այս նախապատրաստական հանդիպումներից հետո հայկական պատվիրակությունները ներկայացան Լոզանի կոնֆերանսի աշխատանքներին:

Անգլիան և Ֆրանսիան մտածում էին ազգային օջախ տալ հայերին Թուրքիայի արևմուտքում կամ հարավում՝ Կիլիկիայում, այստեղ հավաքելով թուրքահայ գաղթականներին:

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը և Ազգային պատվիրակությունը միասնաբար եկել էին եզրակացության, որ պետք էր չընդդիմանալ այդ ծրագրին, քանի որ տվյալ քաղաքական պայմաններում այլ ելք չկար:

1922 թվականի դեկտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանը Լոզանի վեհաժողովի ենթահանձնաժողովի նիստին պաշտպանեց Հայ դատը:

Ելույթի սկզբում նա նշեց երկու պատվիրակությունների պահանջների միևնույն լինելը և որ իրենց հետ համակարծիք են նաև ողջ հայ ժողովուրդն ու գաղթականությունը: Ահարոնյանը իր ելույթում անդրադառնալով թուրքերին նշեց. << յետոյ կուզեմ ըսել , թե որքան մեծ է թուրքերու գործած անարդարութիւնը դէպի մեզ, թուրքերու, որոնք եկած են այստեղ իրենց համար արդարութիւն հայցելու նպատակով>>:

Ահարոնյանը իր ելույթում շեշտեց, որ այդ ժամանակաշրջանում թուրքերը բռնագրավել են ոչ միայն տաճկահայկական գավառները, այլև Երևանի հանրապետության մեծագույն մասը: Թուրքերը 1920 թվականի վերջին, երբ Հայաստանի Հանրապետությունը ճանաչված էր դաշնակիցների կողմից, ներխուժեցին Հայաստան և գրավեցին Կարսի նահանգը, Արդահանը, Սուրմալուն և Նախիջևանը:

Նույն ելույթում Ահարոնյանը նշեց Բրեստ-Լիտովսկի, Բաթումի, Ալեքսանդրապոլի և Կարսի պայմանագրերի մասին՝ ասելով, որ դրանք կրկնում էին մեկը մյուսին և դրանց հետևանքով խլվեցին մեծ թվով տարածություններ:

Ահարոնյանը իր գործունեության ընթացքում ապացուցում էր Ազգային օջախի նշանակությունը և փաստում, որ հարցը հաճախ սխալ է ներկայացվում: Նա ասում էր, որ իրենք ամենևին էլ ապավեն չեն խնդրում և ոչ էլ գաղթավայր, այլ դարավոր հայրենիքի մեջ Ազգային օջախ են ուզում ունենալ:

Հայկական պատվիրակությունը հավատում էր այն խոստումներին, որ նրանց տրվել էր Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի կառավարությունների ներկայացուցիչների կողմից: Ցավոք, այս անգամ ևս մեծ տերությունները չկատարեցին իրենց խոստումները և հայ ժողովրդին թողեցին մենակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով <<Հայկական հարցը Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսներում թեմայի դասավանդման արդիական մոտեցումները հանրակրթական դպրոցում >> հետազոտական աշխատանքը՝ եկանք հետևյալ եզրահանգման՝

1. Լոզանի և Լոնդոնի կոնֆերանսները հայ ժողովրդի պատմության վատթարագույն էջերից են: Այս կոնֆերանսները դարձան այն շարունակությունը, որը սկսվել էր դեռևս Հայկական հարցի միջազգայնացումից, երբ Բեռլինի վեհաժողովում միջազգային հակամարտությունների ոլորտ մտցվեց Հայկական հարցը: Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսներում ևս մեկ անգամ ապացուցվեց մեծ տերությունների՝ Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի իրական դեմքը: Այս կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքներում վերը նշված պետությունները կրկին Հայաստանին տվեցին մեծ խոստումներ Հայկական հարցը լուծելու համար, սակայն այդ ամենը մնացին սոսկ պայմանավորվածություններ և դրանից ոչ ավելին: Մեծ տերությունները կրկին խաբեցին հայկական պատվիրակություններին, իսկ նրանք կրկին հավատացին եվրոպական խոստումների պարկին, որը միայն արտաքինից էր, և նպատակ ուներ լուծելու Հայկական հարցը, իրականում յուրաքանչյուրը առաջնորդվում էր իր սեփական շահերով: Լոզանը փաստորեն դարձավ Հայկական ազգային օջախ ստեղծելու պատրանքի գերեզմանը, պատրանք, որը, ըստ մեզ, երբեք էլ իրականություն չէր

դառնալու: Այստեղ առաջ քաշված հարցերը՝ այդ թվում նաև փախստականների հետ կապված, սոսկ խնդիրներ էին, որոնց լուծմանը նույնիսկ իրենք եվրոպական երկրները չէին հավատում: Նրանց համար այս հարցը տհաճ էր և յուրաքանչյուրը ձգտում էր արագորեն փակել այն: Այս ամենը շատ լավ օգտագործվում էր Թուրքիայի կողմից, նա բոլորին խոստումներ էր տալիս, հանդես գալիս նրանց պաշտպանությամբ, ապա կարողանում էր ծառայեցնել իր շահերին: Լոզանի կոնֆերանսը հանդիսացավ Քեմալական Թուրքիայի դիվանագիտական մեծ հաղթանակը: Այն հմտորեն օգտագործեց եվրոպական երկրների գաղութային նվաճումների փաստերը և դրանք օգտագործելով նրանց դեմ՝ նա պահանջեց իրեն հասանելիք բաժինը: Իսկ իր հասանելիք բաժինը դարձավ հայկական տարածքները, քանզի նա արդեն կորցրել էր Բալկանները, Աֆրիկյան տիրույթները, Մերձավոր Արևելքի տարածքները և կորցնել Հայաստանը նրա համար կնշանակեր իր պետության կործանում, այդ էր պատճառը, որ Թուրքիան համառորեն ձգտում էր չեզոքացնել Հայկական հարցի գոյությունը:Քեմալականները Լոնդոնում և Լոզանում բավական վճռական էին տրամադրված Հայկական հարցի նկատմամբ: Պետք է նշել նաև հայերի թույլ տված սխալների մասին: Նախ Հայաստանը ինչպես նախկինում, այնպես էլ Լոզանում և Լոնդոնում հանդես եկավ երկու պատվիրակություններով: Սրա բացասական նշանակությունը կայանում էր նրանում, որ գործելով առանձին-առանձին չէին կարողանում միասնաբար հանդես գալ, թեև և Ա. Ահարոնյանը և Գ. Նորատունկյանը ու Պողոս Նուբար փաշան հայտարարեցին իրենց համատեղ հանդես գալու մասին:Երկրորդ փաստը կայանում էր նրանում, որ հայկական պատվիրակությունները դեռևս հանդիպումների ժամանակ նկատելով մեծ տերությունների իրենց նկատմամբ անհավատարմությունը, շարունակեցին կոնֆերանսների աշխատանքների ժամանակ վստահել նրանց անվերապահորեն ու հավատացին պատվիրակների ամպագոռգոռ խոսքերին ու ելույթներին:

2. Հայկական պատվիրակությունների սխալներից մեկն էլ անցյալից դասեր չառնելն էր, քանզի պետք չէր վստահել այն երկրներին, որոնք իրենց խոստումները երբեք չէին կատարել: Պետք է դասեր քաղել այս կոնֆերանսներից ու մեկընդմիշտ հասկանալ, որ յուրաքանչյուր երկիր

առաջնորդվում է իր սեփական շահերով և եթե որևէ պետություն որոշակի քայլեր է կատարում ի նպաստ Հայաստանի շահերին, ապա դա նախ և առաջ բխում է նրա շահերից: Ուստի հայ-թուրքական հարաբերություններում առկա բոլոր խնդիրներին լուծումներ տալուց հարկավոր է հաշվի առնել անցյալի սխալները և նախանշել մեր անելիքները:

3. Ո՞րոնք պետք է լինեն մեր հետագա քայլերը: Առաջին հերթին մենք ոչ միայն պիտի հայտարարենք, որ պետություն ունեցող ազգ ենք, այլ պիտի գործենք որպես այդպիսին: Այսինքն՝ պիտի օգտվենք միջազգային սուբյեկտի մեր կարգավիճակից: Հայաստանի Հանրապետությունը կարող է և պարտավոր է միջազգային իրավունքի հիման վրա պաշտպանել իր շահերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եսայան Ա. Ա. Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Երևան 1965
2. Նասիպեան Ա. Բրիտանիա և Հայկական հարցը 1915-1923, Պէյրութ, 1994
3. Ահարոնյան Ա. Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Երևան, 2001
4. Лазарев М.С. Империализм и курдский вопрос (1917-1923), Москва, 1989
5. Борян Б.А. Армения, международная дипломатия и СССР, т.2,Л.,1929
6. Нежинский Л.Н, В интиресах парода или вопреки им? Советская международная политика в 1917-1933 годах, М., 2004
7. История дипломатии, под.ред. В.П. Потемкина, т.3, М.,1945
8. Армянский вопрос на Лозанской конференции: Извлечения из протоколов, под. ред. П.Макинциана, Тифлис, 1926